ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
А Р М А В И Р А

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

13 04 2015թ. թիվ 02/04.1/1271-15

Ձեր << ------ >>-------------------- թ. թիվ------

*Լրագրող Լիլիթ Գրիգորյանին*
*(Արմավիրի մարզ, գ.Փշատավան)*

**Հարգելի Լիլիթ**

Ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու մասին ՀՀ կառավարության 13.02.2014թվականի N 265-Ն որոշմամբ Տ-3-52 (Մ5-Ամասիա-Ջանֆիդա-Արգավանդ-Հ-15) 19.6կմ երկարությամբ ճանապարհը, որի մաս է կազմում Ձեր կողմից նշված Արգավանդ-Փշատավան ճանապարհահատվածը՝ մարզային նշանակության ճանապարհ է:

Վերոհիշյալ ճանապարհի 16.6կմ հատվածը արդեն հիմնանորոգվել է:

Հաշվի առնելով այն փաստը, որ ճանապարհի հիմնանորոգման ծրագրերը կազմվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում, ուստի Դուք կարող եք տեղեկատվության համար դիմել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանը վերոհիշյալ ճանապարհահատվածը նորոգվող ճանապարհների ցանկում ընդգրկելու համար, կարող է առաջարկություն ներկայացնել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

*Կատ՝. Կ.Դանիելյան*